

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Փոփոխում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում

Օտարաբաղաճացիք դիմում են ուղղակի
Туф.мсс. Редакция „Мшакъ“

խմբագրատունը բաց է առևտրեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 թվից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄՆԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից:

1 լրագրի դիրքը և պրօպագանդան նոյն են մնալու: Մենք կը ստանանք ԱՆՓՆԿՆԵՆ ՀԵՌԵՎԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՄՆԵՆՁԻՆ ՀՄՄԵՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը: — Ներքին տեսչութիւնը, Նամակ ֆուլթայից, Ներքին լուրերը: — Արտաքին տեսչութիւնը: Յունաստան. Անգլիայի կապոյտ դիրքը: — Արտաքին լուրերը: — Մշակիչ հեռագիրները: — Յայտարարութիւնները: — Տեղեկացոյց: — Բանասիրական Ամեն տեղից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Հեռագիրը մեզ հաղորդեց, որ արդէն թիւրքաց կառավարութիւնը ընդունեց Ռուսաստանի առաջարկած խաղաղութեան պայմանների հիմունքները և արդէն թշնամական գործողութիւնները երկու կողմից էլ պատերազմական երկու բեմերի վրա՝ Բալկան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՆ ՏԵՂԻՑ

Փոփոխի հասարակութիւնը թէպէտ նեղացած է օրական պիտոյքների թանցութիւնից, փողոցների անմաքրութենից, թէպէտ վախճանում է այն վտանգից, որ իրան սպառնում է՝ տիֆի տարածվելուց, թէպէտ անհամբերութեամբ իր աչքերը դարձրել է զէպի պատերազմական դաշտը, այնու ամենայնիւ նա դուրսնում է մեր բազմատեսակ կուրքներում և ձերարի ցիրկում, նա հանգստանում է թատրոնում Տուրօլա և Սիենի պարոնների տուած օպերաները լսելով: Այս բոլոր տեղերը շատ նշանաւոր տեղեր են, թէ այդ տեղերը յաճախող հասարակութեան բազմատեսակ լինելու կողմից և թէ այդ տեղերում պատահած անցքերի և խօսակցութիւնների կողմից:

Մի անգամ խոստանում եմ, ընթերցող, գաղտնի լինել այդ խօսակցութիւնները և պատմել քեզ: Կրակահանդէսները և երկրորդը շատ բազմատեսակ են լինում: Ի՞նչ չէ պատահում այդ տեղեր: Մէկը աղջիկ է հաւանում, միւսը արդէն հաւանած աղջկան խօսք է տալի, երրորդը որոնում է հարուստ հարսնացու, հինգերորդը խաղաղում է

նեան թերակղզու վրա և Հայաստանի մէջ արդէն դադարեցրած են:

Չէրնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախութիւնը, Բոսնիայի ինքնավարութիւնը, Բոսնիայի, Հերցեգովինայի և այլ քրիստոնեաբնակ գաւառների արտօնութիւնը՝ սրանք են այն հիմունքները, որոնց ընդունեց թիւրքիսն և որոնք վերջնական խաղաղութիւնը հաստատելու համար պէտք է թիւրքաց և ռուսաց քաղաքագէտ հաւատարմատարների բանակցութեան առարկայ դառնան:

Միւս կողմից Դարդանեւեան և Բոսֆորի նեղուցների հարցը Վիեննայում լինելու Եւրոպական

պետութիւնների կօնֆերենցիայի քննութեան պէտք է ենթարկվի:

Առաջարկելով այս պայմանների հիմունքները Ռուսաստանը անկախած ի նկատի ունէր խաղաղութիւն հաստատել երկու պետութիւնների մէջ և մի նոյն ժամանակ կատարել և իր գլխաւոր նպատակը՝ ազատել քրիստոնեաներին թիւրքաց բարբարոսութենից:

Բայց որովհետեւ բանակցութիւնները կարող են և այնպիսի հետեւանք ունենալ, որ հարկաւոր կը լինի շարունակել պատերազմը, մանաւանդ եթէ այլ պետութիւնները այնպէս կը վարվեն ինչպէս Վ. Պոլսի կօնֆերենցիայում, եթէ նրանք կը զրդէն թիւրքիային շարունակել պատերազմը կամ գուցէ իրանք էլ կը մանակցեն պատերազմին, — ի նկատի ունելով այս ամենը Ռուսաստանը պահանջեց, որ թիւրքերը մաքրեն թէ Լըզըում և թէ այն բոլոր ամրոցները, որոնք գտնվում են Գունայի վրա և որոնք դեռ թիւրքերի ձեռքին էին մնացել: Եթէ պատերազմը շարունակվելու լինէր, այն ժամանակ այդ ամրոցները և նրանց մէջ եղած թիւրքաց զորքերի այն մասին, որոնք անցել են բալկանները, վերցրել են Սօֆիա, Եդրիսուպոլ, Բազարջիկ ամրոց-

ները և որոնք սրդէն զրեթէ Վ. Պոլսի տակն են կանգնած:

Այն ժամանակից, երբ սկսվեցան բանակցութիւնները և արդէն խաղաղական պայմանների հիմունքները ընդունվեցան, Վիեննայի կարիները պատրաստութիւններ է տեսնում կօնֆերենցիայի համար, որտեղ նախագահութիւնը առաջարկվում է իշխան Գորչակովին:

Յունաց զորքերը առան թէսալիա և Լպլիոս նահանգները իրանց ազգակիցներին և դաւանակիցներին թիւրքաց բարբարոսութենից ազատելու համար: Անգլիական և ֆրանսիական նաւատորմը մտաւ Բոսֆոր, իսկ լորդ Բիկոնսֆիլդի կարիները ստացաւ այն կրեդիտը, որ նա պահանջում էր պարլամենտից պատահական ծախսերի համար և այդ կրեդիտը վճարվեցաւ պարլամենտի ձայների նշանաւոր մեծամասնութեամբ: Բացի այս ամենը անգլիական հասարակական կարծիքի մէջ էլ մի փոփոխութիւն է նշմարվում: Անգլիացիները, որոնք անզաղարօվացիաներ էին անում Գլադստօնին, որ միշտ պաշտպանում էր թիւրքիապատակ քրիստոնեաների ազատութեան խնդիրը, անգլիացիները, որոնք չէին համակրում ներկայ կառավարութեան գլխի քաղաքականութեանը, այժմ, ինչպէս հաղորդեց հեռագիրը,

- Կարելի է, պատասխանեց, օրիորդներից մէկը, միայն դրան ետևից:
- Ո՞նց զբառ ետևից, ուրեմն ինձ թոյլ չէք տայ մտնել ձեր սենեակը:
- Չեմ թոյլ տայ, այդտեղից դուք դուրսկցե՛ք իմ դէմքը, ես իմ կողմից ես կիմանամ ձեր դէմքը, յետոյ ես ձեզ կը պատմեմ իմ նկարագիրը, դուք ինձ ձեռք, իսկ երկուսեան արուեստաւորների կուրում դիմակահանդէս կայ, այնտեղ կը պատահենք և կը ծանօթանանք:
- Լաւ, թող այդպէս լինի, պատասխանեցի ես աւելի հետաքրքրված, դէ՛հ սկսիր:
- Չէ դու սկսիր:
- Ի՞նչի անպատճառ ես սկսեմ:
- Խօ մէկը պէտք է սկսի, իբրև կապալէր դուք ինձ զիջումն արե՛ք:
- Լաւ, համաձայն եմ: Գեղեցիկ անձանքներ եք, դու շատ սիրուն ես սկսեցի ես:
- Շատ կաւ, շատ կաւ, ներողութիւնս Գու ունես փոքրիկ գլուխ, սե մազեր, սպիտակ ձեռքեր և փոքրիկ ոտքեր:
- Հշմարիտ է:
- Աչքերդ սե են...

- Սխալվեցիր, կապոյտ եմ:
- Այո, կապոյտ ինչպէս երկնքի կամարը:
- Եր ասե՛ք մի և նոյն է:
- Փոքրիկ քիթ ու բերան, սպիտակ ատամներ:
- Այսպէս ինչ գլխի փչեց ասացի, յետոյ նա սկսեց և ճիշդ իմ նկարագիրը ասաց: Անխձածը տեսել էր ինձ պատահանից:
- Ուրեմն այս գիշեր պարահանդիսում կը պատահենք:
- Այո:
- Բայց քեզ ինչպէս ճանաչեմ:
- Ես ինքս քեզ կը ճանաչեմ և կը կանչեմ:
- Այնու ամենայնիւ կուզենայի մի նշան իմանալ:
- Ես քեզ կը կանչեմ ցուցական մատովս, կուրենամ հագած սե դերիա և սե դիմակ:
- Բարիցը տեսութիւն գեղեցիկ անձանքներ:
- Յը տեսութիւն տղիք անձանք:

Երկրորդան ցնացի. ոչ մի տեղ չը գտայ անձանքներուս: Ժամի տասն և մէկն էր, ես մտածում էի գնալ, երբ դա՛հիճը մտաւ մէկ դիմակ, Նա անցաւ միւս սենեակը և ցուցական մատով ինձ կանչեց: Գրա դերիան և դիմակը կապոյտ էին: Երկի խաբեց ինձ, մտածեցի ես, կապոյտ հագաւ սեի փոխարէն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի պարլամենտը այս տարվայ զորատնօրնի համար նոր օրէնք զնկարել որոշել է որ զօրքերի թիւը 28,000 լինի հետեւեղ կերպով 16,288 հետեւեղ զօրք 4044 նախապարձակ զօրք 2608 պահպան զօրք 852 հեծելազօրք 2013 թնդանթածիզ զօրք 1,107 բերրապահ զօրք և 300-ից բաղկացած հիւանդապահների երկու խումբ: Այդ բանակի պահպանութեան համար 20 միլիոն դրամից աւելի ծախք է որոշուել այս տարի: Նրկու շոգեհաններ սրտնք յոյն կառավարութիւնը շինել առած էր Անգլիայում այս օրեր բերվեցան Պարոսի նաւարանք: Կառավարութիւնը ծովային ունի պատրաստութիւն է արած բացի այդ երկու շոգեհաններից:

Կառավարութեան պաշտօնականը երկու կուսակցութեան են բաժնված: Այդ կուսակցութիւններից մինը ուզում է որ, եթէ չեն կարող Սերբիայի նման պատերազմ հրատարակել Փիլիպինայի դէմ, դոնէ զորքն սահմանակից նահանգները ապստամբելու և մարտի և փողով իրանց օդնելու: Բայց միև կուսակցութիւնը ցոյց տալով թէ բաւականին պատրաստութիւն չունեն պատերազմի համար, պնդում են որ կառավարութիւնը խոհանութիւնով վարվի: Այսպիսի վէճերով կորցնում են ժամանակը:

Ժողովուրդը որ անհամբեր սպասում էր պատերազմի, այդ երկար վէճերից ձանձրացած, հրապարակական ցոյցեր են արել և ստիպել են կառավարութեան որ իր չէզոք դրութիւնից դուրս գայ և պաշտպանի ամահասցառակ սահմանակից յոյներին: 10,000-ի չափ ժողովուրդը զեկտեմբերի 26-ին զիմել են Ալեքզէոզի, Տրիկուպիս, Չայլիսի և Կուսունդուրու պաշտօնականը: Ընկարանները առջև, կորտատել են նոցա պատուհանների սպակիւնը և ատրանակներ են արձակել Կուսունդուրու տան վրա: Նրք մարդ վերադարձել և մի մարդ սպանվել է: Բազմութիւնը միմիտորներին սներից զիմել է թագաւորի պալատը: Թագաւորը ժողովրդի առջև կանգնած ատենախօսել է թէ ազգի այս ցուպը զրութեան մէջ գուցէ ոչ ոք այնչափ չէ սիրել և այնչափ չէ զէթալ նրան որչափ ինքը: Բայց ժողովուրդը պէտք է որ հանդարտ լինի և թողնի գործել:

Այս ժողովրդական ցոյցերը ազդեցութիւն ունեցան կառավարութեան վրա որ այժմ յայտնապէս պաշտպան է կանգնում թեսա-

Եր իմանալ ձկ յայտնեց սկզբից, թէ Յարոկ կամ Իւնիւս աշխատակցելու են «Մշակին», որ այժմ նրանք իրանց հետաւալը յայտնում են: Նրք տպւում էր նրանց գրվածները, ամենքը տեսնում էին, որ աշխատակցում են, երբ չը կայ պարոնների ստորագրութիւնը, ուրեմն նրանք չեն աշխատակցում: Գուցէ պարոնները իրանց երեակայեցին Վիկտոր շեքօ, Լուի Բլան և այլն:

Շատ հեռու ենք, պարոններ: Բայց ով գիտէ, գուցէ դրանք են մեր Գամբետտաները: На безрыбьи и ракъь рибѣа, ասում է ուսուց առածը:

Երանի թէ սրանով վերջանաք «Մշակի» անբաղութիւնը, բայց նրան աւելի մեծ տարբարագրութիւն էր սպասում: Նրա մէկ համարը նշանակած օրը, ուրբաթ, չը հրատարակվեց, այլ այդ օրվայ տեղ կիրակի օրը: Մի գեղեցիկ օր խմբագրութեանը յայտնում են, որ զիտաւոր դրաչարը աստիկ հիւանդացաւ: Սկսում են որոնել մէկ ուրիշը, որ նրան փոխարինէ, բայց ոչ ոքի չեն գտնում (այս տարի միեղբուրդներ թանկ են: Տնտեսութիւն է, բայց դրաշարները ոչ թէ միայն թանկ են, այլ չեն էլ ծարվում): Խմբագիրը մտածում է, որ մինչև առողջանալը մնացորդ 6 դրաչարները կը շարին: Բայց նոյն օրը յայտնում են որ «Մշակի» կարեկտօրին վիճակվեց թիֆլիսի 50 միլիոնիսերից մէկը լինել: Այս բաւական չէ ցրվեցներից մէկը էլ դուրս է գալի, որ առու-

Ուստի ուղարկելով նամակիս հետ նուիրատուած անուանական ցուցակը՝ ձեր պատուական լրագրին մէջ հրատարակելու ի գիտութիւն ընդհանրութեան, քաղցր պարտականութիւն եմ համարում յայտնել իմ առ ի սրտէ երախտագիտութիւն մասնաժողովի անդամներին և լրագրան չնորակադութիւնս բոլոր նուիրատուներին:

Գաւիթի ա. ք. Եարախանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Прав. Вѣстн.» պաշտօնական լրագրում կարդում ենք Բարձրագոյն հրաման որով թոյլ է տրվում պատերազմական գործերի դադարման պատճառով կրկին վաճառահանել Ռուսաստանից օտար երկիրները ամեն տեսակ հաց և աւիւր:

«Бакинск. Извѣст.» լրագրը հաղորդում է որ ԲԱՊԻԻ մէջ կապացա քաղաքային Կուսակցի առաջին նիստը, Գրեթէ ըրոր ձայնաւորները միասին էին խօսում, ազնուկ անում, մեծ մասամբ թիւրքերէն էին խօսում: Նրք առաջարկեցին ձայնաւորներից սորան կամ նորան վարչութեան անդամ լինելու, դրեթէ ամենքը հրատարակեցան այդ պաշտօնը ընդունելուց:

Տպում ենք ԳՈՒԹՈՅԻՍԻՅ հայր Գաւիթ Եարախանցի մեզ ուղղած նամակը, բայց հայելու չենք կարող տպել: Եթէ մենք տպէնք և այն բոլոր փողերի հայելուները, որոնք մեզ չեն ուղարկված, այն ժամանակ շատ տեղ կը բռնէին այդ տեսակ հայելուներ մեր լրագրի էջերում: Մենք տպում ենք միայն այն փողերի հայելուներ, որոնք մեզ են ուղարկվում: Եթէ ոչ, յիշում ենք կարծիքով ներքին Լուրի պէս:

«Бак. Изв.» լրագրը հաղորդում է որ ԲԱՊԻԻ Կուսման ընտրեց ուղարկայի անդամներ հետեւեղ անձինքներին: Գաղաշ-Բէկ Սաֆար Ալիէվին և Հասան-Բէկ Մէլիքովին որպէս նորա կանխդատ, յետոյ Բազուի գաւառապետ Անտոնովին և պ. Ալվազովին: Իսկ քաղաքային քարտուղար ընտրվեցաւ պ. Խանէվալից:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցաւ մի նամակ փարիզից, որի մէջ ներփակված գտանք 18 բուլբ, սուսայ թղթագրամով, յօդուտ հայ զաղթականներին: Նամակը ստորագրված է մի ֆրանսիացու աղանուհով և նա ներդրութիւն է խնդրում որ այդքան քիչ է ուղարկում, բայց այդ քիչը աւելացնում է նա, դարձեալ կարող է համարվել ֆրանսիացու համակրութեան նշան դեպի հայերը:

Անցեալ համարներից միտում յիշեցինք որ Տէր-Ղազար քահանային թիֆլիսի մամուլը մի ժամացոյց ընծայեց: Ստորագրութեան մէջ մասնակցող լրագրիւնների թուում մտացանք յիշել դարձեալ մի լրագրի, այն է՝ վրաց «Աստօփո Գազէթի» երկրագործական լրագրի:

և մէկ ծխախոտ ծխել: Ենդիրքը մերժվում է: Սա էլ նոր բան է, էս մարդը, որ պէտք է մէկ վայրկեանից յետոյ մեռնի, նա ծխախոտ է խնդրում:

Թիֆլիսցիներից նրանք, որոնք կարդում են «Մշակ», ինչպէս այդ լրագրի միւս կարդացողները անցեալ շաբաթ գործեալ մի ներկայացումն տեսան: Այդ ներկայացումն բարեհաճեցին տալ պ. պ. Յարոյ և Իւնիւս խմբագրին իրանց ուղղած նամակում նրանք յայտնում են, որ էլ «Մշակին» չեն աշխատակցում:

Ընդհարողին յայտնի է, որ լուսաւորված աշխարհում երբ մի լրագրի է հրատարակվում և այդպիսի լրագրին պէտք է աշխատակցէ մէկ նշանաւոր անձ, օրինակ Գամբետտա, Վիկտոր շեքօ կամ Լուի Բլան, խմբագրութիւնը սկզբից յայտնում է, որ այդ անձինք կաշխատակցեն հրատարակվող լրագրին և այդ յայտարարութեամբ բաժանորդներ են գրաւում: Մի և նոյն ժամանակ երբ այդ անձինք մէկը հեռանում է, նա յայտնում է լրագրութեան միջոցով իր հեռանալը և զգուշացնում է կարդացողներին չը խաղվել Յարոյ և Իւնիւս իրանց շատ նշանաւոր գրողներ երեակայեցին և առանց մտածելու, առանց քննելու, որ իրանց նամակը կարող է միայն ծիծաղել լինել, կարծեցին, որ «Մշակ» առանց այդ պարոնների բաժանորդներ չի ունենայ: Յանկար-

Ֆրանսիական ազգային ժողովը է՛ մերժել պատերազմական միջնորդի ոչ մէկ բիւզէտ, նոյնպէս և գերմանական Բայնստագը է՛ մերժել գերմանական զօրքերի համար պէտք եղած ծախսերը:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՅ

22 դեկտեմբերի 1877

Աղետալի վիճակը և կացութիւնը այն քանի մի հազար տասնհազարակ ընտանիքների, որք զենեբալ Տէր-Ղազարովի առաջնորդութեամբ Բազրեանդ գաւառէն և Տաճկաստանի այլ վայրերէն գաղթեցին Ռուսաստանի սահմանը, անկարեկից չը մնաց և տեղիս սակաւաթիւ հայ ազգաբնակչութեան կորմանէ: Այս գաղթականութեան լուրը առնելուն պէս Քուֆայիսի մէջ ամենուրեք նշմարվում էին կարեկցական ցոյցեր, ամենի բերանից լսվում էին ցաւակցական հառաչանքներ և ցանկութիւն ու պարստասկանութիւն օգնելու այն առաւպիտը և վտանգալեղ եղբայրներուն իրանց ընծայաբերութեան չնչին լուծարիւն:

Այս վերջ համակրութիւնից օգուտ քաղելով նուիրական պարտք համարելի ինձ նպաստելու այն ընդհանուր ձգտման իրագործման. ուստի և յուրիս ամսին կազմելով կանանց մասնաժողով հետեւեղ վեց անձինքներից՝ պօրուչեցա Մուսէ Խեղիոյնեանց, այլի Կէկէլ Գիֆիլեանց, Կիկիլի Նղիսաբէթ Օքրոմնիզեանց, օրիորդ Գեւորպիտէ Խօջայեանց և իմ երկու դստերս՝ Աննա և Նղիսաբէթ, յանձնեցի այդ մասնաժողովին երկու ժապավենեալ մատանս՝ քաղաքիս մէջ նուէրք ժողովելու համար՝ գլխաւորապէս կանանց գասէն:

Մասնաժողովի անդամները ջերմեանդութեամբ և բարեխղճաբար կատարելով այս նուիրական պարտքը, անցեալ նոյեմբեր ամսին ներկայացուցին ինձ ժապավենեալ մատաններուն հետ և ժողովված նուիրարարմը, մէկ մատանով մի հարիւր երեսուն և երեք բութը 100 րուբլ և կօպէկ, իսկ միւսով մի հարիւր երեսուն և երեք ր. 83 կօպէկ: Բացի սրանից, նրանցից տիկին Նղիսաբէթ Օքրոմնիզեանցը ներկայացոյց այլ ևս մի հարիւր բութը 100 րուբլ, որը մի և նոյն նպատակաւ հաւաքել էր նա՝ օգնականութեամբ իր ընկերակից կանանց՝ լոտօի խաղից: Այս ամենը, որ եղաւ երեք հարիւր եւթսուն և հինգ բութը 100 րուբլի. ինչուսուն և երեք կօպէկ (375 ր. 93 կ.) փոստով ուղարկեցի Վրաստանի և Իմէրէթի հայոց վիճակային կոնսիտորիային ըստ № 22 173 և 174:

Թիւնը իմ մէջ ոչինչ զգացմունք չը կար...

— Ուրեմն վեր առնեն դիմակս, ասաց նա խեղդված ձայնով:

— Այո՛, նա դիմակը հանց... Չանկէ կիւնս առաջիս կանգնած էր:

Այսպէս անցքեր շատ և շատ են պատահում, ընթերցող, իսկ ես էլ քեզ շատ անգամ կը պատմեմ:

**

Թիֆլիսի հասարակութիւնը զուարճանում է: Նրան չեն բաւականացնում թատրօնը, ցիրկը, կիւրքը:

Նա գնում է նայելու և այն ժամանակ, երբ մարդիկ են կախում: Յունվարի 23-ին կախեցին կուզանով եղբայրներին: Վաղուց Թիֆլիսում ոչ ոքի չէին կախել: Հասարակութիւնը համարում էր դիմաւորական դատաստանի վճարն: Այսպիսի պատիժները նրա կարծիքով վերջ կը դնեն Թիֆլիսում եղած աւազակութիւններին:

Վաղուց, ասում եմ, Թիֆլիսում ոչ ոքի չէին կախել և մեր քաղաքայիները՝ մարդիկ և կանայք շտապում էին տեսնել այդ ներկայացումն:

Նրկու գեղեցիկ 21—22 տարեկան երիտասարդներ, իրանց հանդիստ ցոյց տալով բարձրանում են կախաղանը, որ էլ կիւրանի չիլիսն, Նրանցից մէկը խնդրում է, որ թոյլ տան իր քրոջը տեսնել

Թշամական ցոյցեր են արել Գրադատոնի դէմ, կոտորել են նրա տան ապակիները, իսկ Բիկոնսֆիլդին բարեկամական օվացիա են արել նրա պարլամենտը գնալու ժամանակ: Այս բոլոր իրողութիւններից համում ենք այն հետեւանքի, որ Անգլիան կամենում է պատերազմի շարունակելը, կամ այնպէս, ինչպէս կար մինչև այժմ, կամ իր մասնակցութեամբ: Պարզ երեւում է, որ Անգլիան էր դրողմ թիւրքիային պատերազմել և չընդունել Ռուսաստանի իրաւացի պահանջները, պարզ երեւում է, որ Ա. Պոլսի կոնֆերենցիայի ժամանակ ինտրիգաներ էր անում, իսկ այժմ, երբ գրեթէ պէտք է ստորագրվեն խաղաղութեան պայմանները: Անգլիան տալիս է իր կառավարութեանը կրեդիտ արտաքին կարգի պատահող ծախսերի համար, իսկ թէ ի՞նչ կարգի ծախսեր են այդ ծախսերը՝ շատ դժուար է հասկանալ:

Գերմանական կառավարութիւնը լուրջութիւն է պահում: Նա ցոյց է տալի միայն, որ պահում է Ռուսաստանի կողմը, բացի այն հարցերից, որոնք իր շահերին են վերաբերվում: Աւստրիան և Անգլիան այն օրից, երբ սկսվեց Ռուսիայի և Հերցեգովինայի սպառնալուծիւնը չեն դադարել պատերազմական պատրաստութիւններ տեսնելուց: Ֆրանսիան և Գերմանիան վերջին պատերազմից յետոյ շարունակել են զօրեղանցել իրանց ոյժերը: Մէկը սկսել է կարգի բերել իր յաղթված զօրքերը, նորեր ստեղծել միւսը շարունակել է կատարելապէս դործել իր ունեցածը: Ֆրանսիական պատերազմից յետոյ

- Ես քեզ իսկոյն ճանաչեցի, դիմակ, ասացի ես մօտենալով:
- Մթթէ, ասաց նա դարմացած:
- Ի՞նչ ես զարմանում:
- Չեմ հաւատում:
- Հաւատա՛ւ:
- Ասա ո՞վ եմ:
- Նեթէ խօսք կը տաս դիմակը հանել, կասեմ:
- Տալիս եմ:
- Գու ինձ ցուցական մատով կանչեցիր, բայց զերիէդ և դիմակը սեփ տեղ, կապոյտ են:
- Այսքանը բաւական է, ճանաչեցի քեզ:
- Գու շատ մոռնիս ես խօսում:
- Ուրեմն մտացար այսօրվայ խօսակցութիւնը. դու ասացիր, որ սե դերիս և դիմակ կունենաս...
- Այո, այո, ես մտացայ:
- Ուրեմն ճանաչեցի քեզ, դու հիմա կը վերցնես դիմակդ:
- Այո, այո, բայց մէկ հարց էլ. ես որտեղ եմ բնակվում:
- Գանովսկի փողոցի վրա:
- Այո:
- Ուրեմն վեր առ դիմակդ:
- Գնանք միւս սենակը այնտեղ կը վերցնեմ: Գնացինք: Ես շատ հետաքրքրվում էի տեսնել այդ աղվան, որ առաւօտը ինձ այնպիսի յաջող պատասխաններ էր տալիս: Բացի հետաքրքրու-

լայի, Նպիրոսի և Կրէտէի յոյներին, օգնելով նրանց որ թօթափեն Քիւրքիայի անառնելը լուծը:

Այս կերպով յոյնի հարցն էլ կը ներկայացվել Ներսիսյան հասարակելը կօնֆէրենցիային:

ԱՆՂԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԾ ԿԱՌԱՐՈՒՄ

Անգլիական կառավարութիւնը ներկայացրեց պարլամենտին իր Կապիտուլացիոն նրա մէջ բովանդակված են զեկտեմբերի 12-ից—Պէտրոսի անկումից երկու օր յետոյ—սկսելով մինչև յունվարի 14 եղած պաշտօնական թղթագրութիւնները խաղաղութեան հաստատելու համար: Կապիտուլացիոն սկսված է դեկտ. 12-ին Քիւրքիայի արտաքին գործերի մինիստր Սերվէր-փաշայի ուղարկած շրջաբերականով որով խնդրում էր նա եւրօպական տերութիւնների միջամտութիւնը և վերջացրած է յունվարի 14-ին պ. Լայպտիչի ուղարկած հետադրով որով խնայ էր տակ թէ մի ուս պաշտօնատար եկել է օսմանեան պահանջները Սարնիսիսիքարի մօտ Օսման. Բագարի առջև, պարլամենտորի դրօշակը ձեռքին, յայտնելու համար թշնամութիւնները զազարելը Բօլագրիայում:

Այդ տեսակը հաստատում է որ լորդ Կերբին անդադար կրկնել է Բ. Իրան թէ Անգլիան բաւական է համարում պաշտպանել միմիայն իր սեփական շահերը և թէ նա պատերազմ չէ յայտնի Քիւրքիայի շահին համար: Թէև անգլիական կառավարութիւնը յօժարել է օգնել Ռուսաստանի և Քիւրքիայի մէջ խաղաղութեան բանակցութիւններ սկսվելուն, բայց միշտ որոշ և հաստատ բաւերով մերժել է օսմանեան կարիքնեղ արած փորձը և ջանքերը որոնցով նա աշխատել է ցոյց տալ Անգլիայի ասածները իբրև միջնորդութեան առաջարկութիւն:

Քիւրքիայի արած հրաւերը եւրօպական պետութիւններին, միջնորդութեան համար, ինչպէս արդէն յայտնի էր, սպարդիւն է մնացել Թաղուհին ասում է պարլամենտի բացման առիթով խօսած ձառի մէջ. «Եւրօպական պետութիւնների մեծ մասը որոնց ուղարկվեցաւ այդ շրջաբերականը, իրանց պարտաւոր չը համարեցին կատարել Քիւրքիայի խնդիրը: Քաղաքացի արդ խօսքը համաձայն է է Բերլինում անգլիական դեսպան լորդ Օրօրաէլի դեկտ. 16-ին ուղարկած այս հեռագրին. «Բերլինիայի կայսրը մերժում է Սուլթանի խնդրած միջնորդութիւնը»: Յետոյ Բ. Իուուը էլի մի նոր փորձ է արել իր ցանկա-

ցած միջնորդութիւնը յաջողեցնելու համար Անգլիայի շնորհով Այդ բողէին դեռ կարծում էին Կ. Պօլսում թէ Անգլիան անշուշտ, վաղ թէ ոչ, աւելի ազգու և գործունեաց կերպով կը մասնակցէ առաւելագրական վեճին:

Լորդ Կերբին դրա մասին գրում է պ. Լայպտիչին դեկտ. 21-ին. «Որովհետև Ձեր վեճակները մի քանի անգամ է որ նկատողութիւն է անում Անգլիայի միջամտութեան կարելութեան համար, ես հարկաւոր եմ համարում կրկնել Ձեզ ինչ որ արդէն մի քանի անգամ ասել եմ. թէ չը պէտք է յուսալ մեզանից այդ տեսակ և ոչ մի միջամտութիւն: Նորին Վեհափառութեան կառավարութիւնը չէ ուզում հետանալ իր որոշած չէզոքութեան պայմաններից»:

Մի քանի օրից յետոյ, Լորդ Կերբին առաջարկում է որ աշխատեն իմանալ ուսաց կառավարութիւնից, պ. Լայպտիչի միջոցով թէ Կայսրը յօժար է խաղաղութեան բանակցութիւններ սկսվելուն: Այնու ամենայնիւ, Բ. Իուուը աւելի մեծ յոյսեր ունէր Անգլիայի վրա, ինչպէս երևում է Սերվէր փաշայի դեկտեմբերի 24-ին գրածներով: «Սուլթանը, արդէն Սերվէր փաշա, որոշել է ուղղակի դիմել Նորին Վեհափառութեան Բերլինի անկումի կառավարութեանը որ միշտ բարեկամաբար խնամ է տարիլ օսմանեան պետութեան անկախութեան և անորոշութեանը, որոնք նրա քաղաքական գոյութիւնը պահպանող հիմնական սկզբունքներն են» և աւելացնում է թէ Սուլթանը խնդրում է Անգլիայի միջամտութիւնը. «միջամտութիւն որի մասին համոզված է թէ մի հին և հաստատուն բարեկամ չէ ուզել մերժել իրան»:

Որովհետև արդէն ընդունվել էր լորդ Կերբին նախկին առաջարկութիւնը որ պատերազմ էր հետաքրքիր լինել և տեղեկանալ Ռուսաստանի դիտաւորութիւններին, աւելորդ էր լինում ուղղակի պատասխանել Սերվէր փաշայի այդ խնդրին. բայց մի և նոյն ժամանակ հրաման արվեցաւ Պետերբուրգի անգլիական դեսպան լորդ Լօֆտուսին որ աշխատէ իմանալ իշխան Կորչակովից թէ Ռուսաստանը յօժարում է խաղաղութեան բանակցութիւններ սկսվելուն:

«Կորչակով իշխանը, գրում է լորդ Լօֆտուսը դեկտեմբերի 29-ին, ընդունեց իմ ասածները շատ քաղաքավարի և բարեկամական կերպով և յանձնարարեց ինձ պատասխանել Նորին Վեհափառութեան կառավարութեանը թէ Ռուսաստանը ցանկանում է ամեն խաղաղութեան բանից աւելի. բայց Բ. Իուուը պարտաւոր է այդ նպատակի համար

ինք ուղղակի դիմել Ռուսական բանակների զինաւոր հրամանատարներին Ներսիսյան և Նահայրում և նրանք կը յայտնեն թէ ինչ պայմաններով կարելի է զինազարար շնորհել»:

Սրանից յետոյ գրված են Կապիտուլացիոնների վերաբերեալ:

Այդ գրուածներից երևում է թէ անգլիական կառավարութիւնը ինչ որոշում որ արել է, Բ. Իուուը միշտ տարբեր կերպով է հասկացել և իրա նպատակը մեկնութիւններ է տուել նրան:

Բ. Իուուը խնդրել է նախ Անգլիայի միջամտութիւնը որ մերժվել է:

Յետոյ կըր Անգլիան յանձնարու է եղել մի մարդավարական պաշտօն կատարել Բ. Իուուը խնդն այնպէս է հասկացել որ միջնորդութեան առաջարկութիւն է դա, թէ պէտք արդէն բացատրված էր թէ Անգլիայի կատարած պաշտօնը չէ կարելի իբրև միջամտութիւն ընդունել:

Վերջապէս, կըր իմացվել է թէ Ռուսաստանը յօժար է բանակցութիւնների սկսվելուն, Սերվէր փաշան ուղարկել է անգլիական կառավարութեան հետեակ հեռագիրը. «Օսմանեան կառավարութիւնը ընդունում է Ռուսաստանի առաջարկած զինազարար սկզբունքը»: Թէպէտ յայտնի է որ Ռուսաստանը մի այդպիսի բան չէր առաջարկել, այլ միայն զինազարար շնորհելու համար ինչ էր ցոյց տուել այն պայմաններով որոնք պիտի որոշվին պատերազմի դաշտի վրա երկու գրեւ խաւոր հրամանատարներից:

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Խաւաքական շատ լրագրիներ խօսքերով Ռուսերտ թաղաւոր մի քանի շաբաթից յետոյ մտադրել է գնալ Խաւաքի ափերն անհատական և աստուծոյ քաղաքները: Նրան ճանապարհորդակից կը լինի ներքին գործերի մինիստրը: Նոյնպէս տեղեկանում ենք որ Աօսթի դուքսը նշանակված է գլխաւոր հրամանատար եթէնը որդորաբաժնի (Հ.Օ.Մ.Մ.) Այս պատճառով մինչև Վիկտոր-Վամանուէլի մահը կատարում էր ժառանգ իշխանը. այժման Ռուսերտ թաղաւորը — Օծօրն — լրագրի Ալեքսանդր Նեւազրում են յունվարի 29-ին (փետրվարի 10-ին), որ այստեղի քաղաքի ան շրջաններում լուր է տարածված իբր թէ յունվարի 21-ին (փետրվարի 2-ին) արդէն Ռուսաստանի և Քիւրքիայի մէջ պաշտպանողական և յարձակողական դաշն է կապված:

— Հուուրից հաղորդում են որ Ռուսերտ I-ի կառավարութիւնը յայտնեց, որ նա կը պաշտպանէ կոնկրետ անկախութիւնը որին նա արդէն զօրքեր առաջարկեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ա.Գ.Ի.Ս.Ն.Պ.Պ.Ո. (պաշտօնապէս) յունվարի 27-ին: Մեր զօրքերը յունվարի 17-ին մտան Էսկի-Պոստա, որ սաստիկ աւերված գրութեան մէջ գտան: Քաղաքի զանազան մասերը այրվում էին, այս տեղ և այնտեղ ընկած էին 200 դիակներից աւել, որոնց թւում կանանց և երեխաների այլանդակված մարմիններ: Էսկի-Պոստայից մեր զօրքերը առաջ դնացին մինչև Էսկի-Ստամբուլ և Վերքից: Բայց կըր յունվարի 23-ին ստացվեցաւ Էսկի-Պոստայի յում զինազարարման լուրը, իսկոյն հրամայվեցաւ մեր զօրքերին դուրս գալ Էսկի-Ստամբուլից և Վերքից այցելու և կանգնել զինազարարման պայմանների մէջ որոշված նշանազծի (դէմարկացիօնական դժի) այս կողմը: Այսօր, վաղ առաւօտ, հասաւ այստեղ կոնսուլն Իզնատիէլ:

10-րդ փետրվարի 12-ին (յունվ. 31): Արսէնալներում նկատվում է եռանդոտ գործունէութիւն: Չատառի մէջ հրաման է ստացված շուտով աւարտել զինուորական նաւերի շինութիւնը: «Times» ասում է որ բոլոր պատահած անցքերից յետոյ անգլիական նաւատորմի Կ. Պօլս ուղարկելը անհրաժեշտ է: Ռուսաստանի ազգարարութիւնից յետոյ հարց է ծնվում՝ արդեօք Ռուսաց զօրքերի Կ. Պօլսի մէջ մտնելը այն աստիճանի դիպւած է անգլիական շահերին, որ այս վերջինը ստիպված կը լինի աւելի զօրեղ միջոցների դիմել Կ. Պօլս պաշտպանելու համար: Կ. Պօլսի Ռուսաց զօրքերով ժամանակաւոր պաշարելու երկիւղ չէ յարուցանի Անգլիայում, բայց Քիւրքիայի մարաքաղաքի առաներից անորոշ ժամանակով պաշարելը, զույգ կը ստիպէր անգլիական կառավարութիւնը աւելի արագ և համարձակ գործել:

Ս. Պետրովսկի. փետրվարի 1-ին: Ռուսաց 1 ըուրլ Լանդուի վրա արժէ 25¹¹/₁₆ պէնս, Ռուսաց 100 ըուրլ Գերմանիայում արժէ 219 մարկ 50 Ք., Փարիզի վրա արժէ 271 Ֆրանկ: Ռուսաց 5% պետական բանկի տոմսի առաջին շրջանի արժէ 96¹/₈ ը., երկրորդ 96 ը., երրորդ 95¹/₄ ը., չորրորդ 94³/₄ ը., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսի վրա արժէ 230 ըուրլ: Երկրորդ 229 ը. 50 կօպ, Արեւելեան փոխառութեան տոմսի վրա արժէ 92⁵/₈ ըուրլ: Պօլսի պերիսի գինը 7 ըուրլ 60 կօպէլ է: Տրամադրութիւնը թղլ է, վերջը հաստատվում է:

տուրով պարապի, իսկ միւսը, որովհետև չէ կամենում շաւաբար և Օրթաճալա տանել համարները: Լաւ գրութիւն չէ, այսպիսի գրութիւնը, մանաւանդ, կըր ուղումն համարը անպատճառ ծնեցնել: Երկու փոքր գրաչարների ձեռ, մինչև առաւօտեան ժամը հինգը անցկացնելը հեշտ չէր լսմբարդին. բայց երրորդ գիշերը, ոչ ոք չը կարողացաւ դիմանալ: «Մշակը» այդ երեք օրը ձեռքերը և ոտքերը կտրտած մարդու էր նմանվում, վերջապէս կորեկտօրը ազատվեց, որովհետև միակ սղայմարդ էր, որ պահում էր իր ընտանիքը և որովհետև մասնաժողովի ցուցակը այնպէս է եղել կազմած, ինչպէս առճամարակ լինում է սխալ առանց հաստատ տեղեկութիւն ունենալու: Ինչ և իցէ մեր կորեկտօրը ազատվեց, զխաւոր գրաչարը, պ. Սմբատ Կուլուշանեանցը, այդ պատմական մարդը, որ «Մշակին» հրատարակվելու օրից քս կարգացած յօգուածները, ընթերցող, իր մատնիքով է շարել, զա էլ առողջացաւ և գործը կրկին ինչպէս ասում են, շարին ընկաւ:

* *

Այս անգամ գրուածքս իր վերնադիրը չէ արդարացում: Սա գրված է Քիւրքիայի և ոչ թէ ամեն տեղից, Գոնէ երկու անցը պատմեմ, Պապը, ընթերցող, մեռաւ: Ներսէսի Պիտ IX մեռաւ և ինչպէս ասել էի անցկայ անգամ, մեծ

փոփոխութիւններ կը լինեն կաթօլիկ աշխարհում: Պիտ IX իր անսխալականութիւնը հրատարակելով և իր աշխարհական իշխանութիւնից զրկվելով պատերազմ յայտնեց ոչ թէ միայն Խաւաքային, այլ բոլոր պետութիւններին, որոնք կաթօլիկ կապտակներ ունէին:

Ինչպէս մէկ քաւ զօրաւոր, նա առաջնորդում էր իր հետևողներին: Նրա եպիսկոպոսները անմիաբանութիւն էին ցանում այն բոլոր երկիրներին մէջ, որոնց կառավարութիւնները ընդդէմ էին Պապին: Բայց նշանաւորը այն է, որ պապը մեռնում է Վիկտոր Կամանուէլի մահից մի քանի ժամանակ ճետոյ: Երկու հակառակորդները գրեթէ միասին գերեզման մտան:

Մէկ անցը էլ կը պատմում, որ պատմեցել է Ֆրանսիայում անցեալ տարի: Այդ երկրի դեղերից մէկում բնակվում է Լանֆրէ անունով մէկը իր կնոջ և 17 տարեկան որդի Անտուանի հետ: Մէկ օր փօստից ստացվում է Անտուանի անունով մի ծրար, որ պարունակում էր իր մէջ. 1) կտակ, ստորագրած Վարեան կղզիների թագաւոր Ֆերդինանդից, որով թագաւորը անժառանգ մեռնելով իր թագաւորութիւնը թողնում է Անտուանին, այն պայմանով, որ սա պատկի իշխանուհի Վարե-Ազգուստինայի հետ, 2) թագաւորը իշխանուհու ժօրը տեղապառ է նշանակում, 3) Մի նամակ Ֆերդինանդից Անտուանի հօրը գրած, որով խնդրում էր թողլ սա ալ իր որդուն

այդ ժառանգութիւնը ընդունել: 4) Նամակ տեղապառ իշխանուհու կողմից, որտեղ իշխանուհին ազգաւոր է Անտուանին շտապել և պատկառելի կրկնելը և բաղաւորացնել իր նպատակներին: Լանֆրէի ընտանիքը առանց երկար մտածելու, թէ կա արդեօք այդպիսի մի թագաւորութիւն, կամ ինչի պէտք է իրանց կտակվել, եղել է արդեօք Ֆերդինանդ թագաւոր, առանց այս բոլորը ի նկատի ունենալու՝ պատրաստվում է ճանապարհորդել դէպի Վարեան կղզիները: Մի քանի ժամանակից յետոյ լրագրիներից մէկում լուր է ստացվում, թէ լուսմ ենք, որ մեր հարեանակիցները ինչ մէկը այսպիսի ժառանգութիւն է ստացել: Սրանից յետոյ Լանֆրէի ունեցած բոլոր կամեանքներ անհետանում են: Անտուանը ոչ թէ միայն ճանապարհի պատրաստութիւն է տեսնում, այլ և պատակաստաններ, մինիստրներ և թիկնապետներ հրամանատարներ է դառնում: Մի քանիստի իմում է հոգեւոր գործերի մէջ երբորդին արտաքին գործերի և այլն: Նա պատկիրում է, որ կիւրծներ և զանազան պատուանիւններ պատրաստեն, կազմում է հրովարտակչուհիներ և շրջաբերականներ ձեռն: Ահա այդ հրովարտակիցներից մէկը, որով երիտասարդ թագաւորը բարձրութիւն է տալի Լանֆրանիին, այն մարդկերանից մէկին, որոնք հեռուց եկել էին իրանց ծառայութիւնը առաջարկելու ապագայ

Թագաւորին: «Անտուան, Աստուծոյ ողորմութիւնով թագաւոր, մեր խորհրդատուներին և սիրելի ժողովրդին ողջոյն ենք ուղարկում: Մեր թագաւորական սան, ժողովրդի և պետութեան շահերը ի նկատի ունենալով, նշանակում ենք մեր սիրելի Լանֆրանիին խորհրդատու, և ընծայում ենք նրան բարձիւն արտաքին և փրկիչ շքանշանը...» Նոր նախարարներից մի քանիսը պատուում էին, որ գնան Վարեան կղզիները և այնպիսի վայելեն իրանց պաշտօնի պտուղները՝ իսկ Բիթօ, Սաբատիէ և Տատիգրեան իրանց պաշտօնին համեմատ հագնված, մինչև Լանֆրէի ընտանիքը վերջին ունեցած ծախումէր, ճանապարհի պիտոյները գնելու, կաւեբրով շրջում էին Փարիզի փողոցները և մի միւսից փող էին պարտք առնում: Վերջապէս պօքիլան գրանց կալանաւորում է, իսկ դատարանը վճռում է բանտարկել մէկին հինգ, միւսին երկու տարի և երրորդին 15 ամիս: Իսկ Լանֆրէի ընտանիքը, որ վկայ էր կանչված դատաստանին, յուսահատված մնում է և ամբողջ Ֆրանսիայի ծիծաղի առարկայ է դառնում:

Ընթերցողը երևի կը հետաքրքրվի իմանալ, թէ ով է ուղարկել խնդր ընտանիքին ծրարը, կամ ով է տարածել Լանֆրէի ժառանգութիւն ստանալու լուրը, որ լրագրումն էլ է տպվել:

Կա եղել է մէկ ճանապարհ ֆրանսիայի:

Անյայտ

ს ე ბ ა ს ა რ ა ო რ ი ბ ი რ ი

ყველაფერი ღირსეულად დაწერილია

ყველაფერი ღირსეულად დაწერილია... პირველი ნაწილი...

ყველაფერი ღირსეულად დაწერილია... მეორე ნაწილი...

2-2

В книжном магазине Ушарова продается книга и описание древностей города Тифлиса, соч. Платона Иоселлиани. Цена 50 к.

В книжном магазине Ушарова продается книга и описание древностей города Тифлиса, соч. Платона Иоселлиани. Цена 50 к.

2-4

საბჭოთაო საბჭო 1878 წლის

საბჭოთაო საბჭო 1878 წლის... პროგრამა...

Подписка на 1878 год.

ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗ. ДРОЭБА

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

ПОДПИСНАЯ ЦЕНА

На год 8 р. - 1/2 года 5 " 50 к.

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1878 ГОДУ

„ДОНСКОЙ ПЧЕЛЫ“

ПОЛИТИЧЕСКОЙ-ЛИТЕРАТУРНОЙ ГАЗЕТЫ.

Съ 1-го января 1878 года газета „Донская Пчела“ издается по той же программе...

ПОДПИСНАЯ ЦЕНА:

Table with subscription rates: На год 6 р., 1/2 года 3 " 50 к., 3 мѣсяца 2 " -

ЗА ПЕРЕМѢНУ АДРЕСА РЕДАКЦІЯ ВЗИМАЕТЪ 25 КОП.

Подписка принимается въ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону...

2-5

Редакторъ-Издатель И. А. Теръ-Абрамянъ.

ყველაფერი ღირსეულად დაწერილია

ყველაფერი ღირსეულად დაწერილია... პროგრამა...

საბჭოთაო საბჭო 1878 წლის

Table with 2 columns: Issue number and Price. 3 ღირსეული 44 კპ., 4 " " " " 457 " etc.

4784

Large financial table with columns: მონეტები, სხვა, ფონდები, მონეტები, სხვა, ფონდები. Includes sub-tables for 'სხვა' and 'ფონდები'.